

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻ ՆՈՐԻԿԻ ԳԱԼՍՅԱՆ

ՇԱՀՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ը.00.01 - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գալստյան Գագիկ Սերգեյի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Միքայելյան Միքայել Վարազդատի
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Պետրոսյան Արսեն Արամի

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական ճարտարագիտական
համալսարան (Պոլիտեխնիկ)

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. մայիսի 16-ին ժ. 15.00-ին Երևանի
պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. ապրիլի 15-ին

015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Ն. Առաքելյան

Շահույթը տնտեսական գործունեության շարժառիթն է, իսկ տնտեսության տարբեր ոլորտներում շահույթի ստացումը, ձեռնարկությունների արդյունավետ տնտեսվարումը զգալիորեն կախված են երկրում տնտեսական կայունության մակարդակից: ¹ Շահույթը տնտեսագիտության տեսության վիճելի և անորոշ կատեգորիաներից է, որի շուրջ բանավեճերը դեռևս շարունակվում են: Շուկայական տնտեսությունում ձեռնարկությունները որդեգրում են քաղաքականություն, որն անխուսափելիորեն կհանգեցնի շահույթի և շահութաբերության աճին: Շահույթն արտացոլում է արտադրատնտեսական գործունեության արդյունավետությունը, ուստի շահույթի ձևավորման աղբյուրների հստակեցումը, պլանավորումն ու ստացված շահույթի բաշխումը կանխորոշում են գործունեության հաջողությունը; Շահույթը նաև ներդրումային ակտիվության առանցքային ինդիկատոր է: Ձեռնարկության նպատակներին ու խնդիրներին համապատասխան շահույթի բաշխումը մեծապես նպաստում է հետագա առաջընթացին, կատարելագործմանը, նորարարություններ կիրառելու հնարավորություններին, ինչպես նաև աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Արդի ժամանակաշրջանում երկրի տնտեսական զարգացման ուղիների ուրույն տարբերակ են առաջարկում գեոտնտեսական մոտեցման կողմնակիցները, որոնք դիտարկում են ազգային տնտեսության տեղը գլոբալ գեոտնտեսական տարածությունում, նրա օպտիմալ ներթափանցումը համաշխարհային աշխարհատնտեսական կապերի մեջ: Այս առումով մրցակից պետություններից յուրաքանչյուրը ձեռնարկությունների հետ մեկտեղ ձգտում է մեծացնել շահույթը, հետևաբար, նաև, ազգային հարստությունն ու բարեկեցությունը՝ համաշխարհային շուկայում իրենց մրցունակությունը բարձրացնելու միջոցով: ² Հարկ է մշակել այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ազգային տնտեսության բարենպաստ դիրքին համաշխարհային շուկայում և այդ բարեփոխումների ընթացքում չի նպաստի տվյալ կառույցի ապակայունացմանը: Ներկայումս գրականությունում հաճախ շահույթից վեր է դասվում ռազմավարական էֆեկտը, որի նպատակն արտաքին ինստիտուցիոնալ միջավայրում գործունեության կարգավորումն է: Հաշվի առնելով շուկայական տնտեսությունում շահույթի ձևավորման ու բաշխման նշանակալի դերը,

¹ 2012թ. Moody's վարկանիշային կազմակերպության կողմից Հայաստանին տրված սուվերեն վարկանիշի հիմքում ընկած 4 առանձին գործոններից «տնտեսական կայունությունը» և «ինստիտուցիոնալ կայունությունը» գնահատվել են «ցածր», այստեղից էլ «երկրի տնտեսական ճկունությունը» նույնպես գնահատվել է ցածր, աղբյուր www.Moody's.com. Credit rating for each country

² Жан К., Савона П., Геоэкономика. Господство экономического пространства. М.: Ad Marginem, 1997. էջ 35

անհրաժեշտ է խորը ուսումնասիրության ենթարկել շահույթի ձևավորման մեխանիզմները, դրանց կատարելագործման ուղիները, բաշխման առանձնահատկությունները և այլն:

Հետազոտության նպատակը և խնդիրները Ատենախոսության նպատակն է շահույթի քննարկումը որպես տնտեսական գործունեության հիմնական նպատակ, դրա ձևավորման և բաշխման ուսումնասիրությունը: Ատենախոսությունում առաջադրվել են որոշակի խնդիրներ, որոնք կանխորոշել են ուսումնասիրության կառուցվածքը: Բրականացվել է հետևյալ խնդիրների ուսումնասիրությունը.

-ձեռնարկությունների շահույթի ձևավորման և բաշխման գործոնների հետազոտություն և համակարգում ,

-ՀՀ տնտեսությունում ձեռնարկությունների շահույթի ցուցանիշների վերլուծություն՝ միտումները և իրավիճակը գնահատելու նպատակով,

-ՀՀ տնտեսությունում շահույթի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների լուսաբանում,

-վիճակագրական դիտարկումների հիման վրա ՀՀ տնտեսության ոլորտների գործունեության արդյունքների վերլուծություն՝ շուկայի ազդակներին առավել արագ արձագանքելու տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը և առարկան Հետազոտության օբյեկտը շահույթն է, որպես տնտեսությունում կազմակերպությունների գործունեության արդյունք: Հետազոտության առարկան շուկայական տնտեսությունում շահույթի ձևավորման և բաշխման գործընթացներն են և դրանց մեթոդաբանական հիմնահարցերը:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվական հիմքը

Հետազոտության տեսամեթոդական տեղեկատվական հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան տնտեսագետների տեսական և կիրառական հետազոտությունները, ինչպես նաև վիճակագրական նյութերը:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը.

-առաջարկվել է շահույթի դերի յուրովի մեկնաբանություն՝ ՀՀ-ի ազգային տնտեսության զարգացման և համաշխարհային տնտեսական կապերի համակարգին ինտեգրման տեսանկյունից,

-հիմք ընդունելով շահույթի տնտեսական էությունը և ձևավորման աղբյուրները համակարգվել են դրանց տեսական դրույթները,

-ուսումնասիրելով այլ երկրներում իրականացված տեսական հետազոտությունները և փորձը առաջադրվել են ՀՀ-ում շահույթի ձևավորմանը, շահութաբերության աճին նպաստող ուղիները,

-գնահատվել է ՀՀ-ում կազմակերպությունների համախառն և զուտ շահույթը՝ հիմնված էկոնոմետրիկ վերլուծության վրա:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը.

Ատենախոսությունում կատարված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ ձեռնարկություններում շահույթի ձևավորման և բաշխման գործընթացները ռացիոնալ իրականացնելու և հարկային արդյունավետ քաղաքականություն մշակելու համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները.

Հետազոտության արդյունքները քննարկվել են ԵՊՀ «Տնտեսագիտության տեսության» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են գիտական հինգ հոդվածներում.

Հետազոտության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 157 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, դրանց տեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Շահույթի տնտեսական բովանդակությունը և մեկնաբանությունները», ներկայացված են շահույթի հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը, շահույթի և հավելյալ արժեքի մեկնությունները մարքայան տեսությունում, շահույթի տնտեսագիտական բովանդակությունը, գործառույթները և շահութաբերության մեկնաբանումը:

Շահույթը շուկայական տնտեսությունում տնտեսական գործունեության առաջնային նպատակ է: Չնայած գործնականում շահույթը որոշվում է ապրանքների և ծառայությունների վաճառքից ստացված ընդհանուր հասույթի և համախառն ծախսերի տարբերությամբ, տեսական քննարկումներում շահույթի էության, աղբյուրների, ձևերի շուրջ տարաձայնությունները շարունակվում են: Ատենախոսությունում դիտարկված են առավել հիմնարար մեկնակերպերը և ուսումնասիրության արդյունքում ներկայացվել է ընդհանրական հայեցակարգ: Քանի որ շահույթի տեսության պատմությունում առանձնահատուկ է Մարքսի և նրա գաղափարակիրների մեկնաբանությունը, դիտարկվել է շահույթի և հավելյալ արժեքի մարքսյան տեսությունը: Ներկայումս տնտեսագիտական գրականությունում շահույթը որպես արտադրության գործոնների կիրառման արդյունքում ստացված ձեռնարկատիրական եկամուտ տարբեր կերպով է ընկալվում՝ որպես նորարարության համար վճար, կառավարման տաղանդի, ռիսկի համար վճար և այլն: Ժամանակակից տնտեսագիտական պարադիգման առաջարկում է շահույթի հետևյալ բնութագրերը .

- ա) ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված եկամուտ,
 - բ) ձեռներեցի եկամուտ, որն իր կապիտալը ներդրել է առևտրային հաջողության հասնելու նպատակով,
 - գ) վճար ռիսկի դիմաց, քանի որ շահույթը երաշխավորված եկամուտ չէ,
 - դ) զուտ եկամուտ, քանի որ որոշվում է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված եկամտի և ծախսերի տարբերությամբ,
 - ե) արժեքային ցուցանիշ, քանի որ իրականացվում է բոլոր առնչվող ցուցանիշների հաշվառում:³
- Շահույթ կատեգորիայի էությունն արտահայտվում է նաև նրա իրականացրած գործառնություններում՝ շահույթն արտացոլում է ձեռնարկության գործունեության արդյունքում ստացված տնտեսական էֆեկտը, կատարում է խթանող գործառնություն, տարբեր մակարդակներում բյուջեների ձևավորման աղբյուր է, ձեռարկությանը

³ Бланк И. А.. Управление прибылью. Киев : Ника-Центр, 2007., էջ 15

հնարավորություն է տալիս կատարել իր պարտավորությունները՝ կապված բյուջեի, բանկերի և այլ կազմակերպությունների հետ:

Տնտեսությունում եկամտի և գուտ շահույթի միջև ակնառու խզումն առաջանում է ծախսերի տարբերության, ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակի պատճառով(առևտրային տարածքների բարձր վարձակալման վճարներ, էներգառեսուրսների մատակարարման խնդիրներ, վարչական ծախսեր՝կապված նոր առևտրային օբյեկտների բացման հետ և այլն) և իրավիճակը շտկելու համար հարկ է արդյունավետ օգտագործել ժամանակակից տեղեկատվական համակարգերը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, և այլն: ⁴ Հաշվի առնելով արտադրողականության էական ազդեցությունը ծախսերի կրճատման, հետևաբար նաև շահույթի ձևավորման վրա, հարկ է ընդգծել, որ Հայաստանի տնտեսության հիմնական թերություններից մեկը ցածր արտադրողականությամբ ոլորտների գերակայությունն է՝ ՀՀ-ում առաջատար արտադրողականություն ունեցող երեք ոլորտներում(ֆինանսական միջնորդություն, հանքագործություն, շինարարություն) ընդգրկված է զբաղվածների մոտ 9%-ը, իսկ աշխատուժի մոտ կեսը կենտրոնացած է արտադրողականության ամենացածր մակարդակ ունեցող երեք ոլորտներում(կացություն և հանրային սննդի կազմակերպում, գյուղատնտեսություն, կրթություն): ՀՀ-ում տնտեսության ոլորտներում արտադրողականության ցուցանիշների զգալի տարբերություն է դրսևորվում: Վերջին ժամանակաշրջանում ՀՀ հարստության գերակշռող բաժինը ստեղծվում է երկու ոլորտներում՝ ծառայություններ և գյուղատնտեսություն,բացի այդ նկատելի է նաև արդյունաբերության բաժնի աճը:⁵

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Շահույթի ձևավորման, բաշխման առանձնահատկությունները և դրսևորումները տարբեր շուկայական կառուցվածքներում», ուսումնասիրվել են շահույթի դրսևորումները շուկայական տարբեր կառուցվածքներում, շահույթի ձևավորումը և բաշխումը, շահույթի բաշխման խնդիրները կորպորատիվ հատվածում:

Մրցակցություն ասելով նկատի ունենք ոչ միայն շուկայի կառուցվածքը, այլ նաև տնտեսվարող սուբյեկտների վարքի ռազմավարությունը: Ընդհանուր առմամբ,

⁴ Радаев В., Как обосновать введение новых правил обмена на рынках., «Вопросы экономики», № 3, 2011, Москва, Издательский дом «Красная звезда», էջ. 119

⁵ Հայաստանի ազգային մրցունակության գեկույց 2011-2012.կառավարման պրակտիկայի բարելավման օրակարգը: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, «Ի-վի Քոնսալթինգ» ՓԲԸ, 2012թ., էջ 13

սնտեսությունում գիտելիքի կուտակման ինտենսիվությունը, նորարարությունները ուղղակիորեն կախված են դրանց կիրառության արդյունքում ստացվող շահույթից: Այն դեպքում, երբ մենաշնորհները թե սնտեսությունում և թե քաղաքականությունում կատարելագործվելու կարիք չունեն համար, մրցակցության հանդիպող կազմակերպությունները ստիպված են միջոցառումներ ձեռնարկել իրենց վիճակը բարելավելու նպատակով: Շահույթի մեծության վրա ազդում են շուկաներում առկա տրանսակցիոն ծախքերը, որոնք ինստիտուցիոնալ-կազմակերպական կառուցվածքի անարդյունավետության պատճառ են և խոչընդոտում են ապրանքների և ծառայությունների արտադրությանը: Շուկայական գործընթացում շահույթի ձգտող գործարարները մրցում են միմյանց հետ և հաջորդաբար փորձում անցնել մեկմեկու՝ շուկայում առաջարկելով գնելու և վաճառելու առավել հրապուրիչ տարբերակներ: Այս ձգտումը նպաստում է արդյունավետությանն ու կատարելագործմանը, և հակառակը, եթե շուկայի որևէ մասնակից ինչ-ինչ պատճառներով կարիք չունի մրցակցելու, դա վնասաբեր է ողջ շուկայական համակարգին: Մրցակցային կոնվերգենցիայի պայմաններում ոլորտի արտադրողները ավելի ու ավելի են նմանվում միմյանց և ստեղծված իրավիճակն ուժգնացնում է շահույթի վրա ճնշումը, քանի որ սպառողները արտադրանքի միանման որակական հատկանիշների դեպքում կողմնորոշվում են գնով: Գործառնական արդյունավետության ձգտումը կարող է նվազեցնել նորարարությունների կիրառության հաճախակիությունը, ներդրումների կրկնօրինակման և ավելցուկային հզորությունների ստեղծման պատճառ դառնալ:⁶

Կազմակերպությունների շահույթի ձևավորման աղբյուր են իրացման(արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների) հասույթը և արտաիրացումային գործունեությունից շահույթը: Ոչ գործառնական շահույթը ձևավորվում է համատեղ ձեռնարկություններում ունեցած մասնակցությունից ստացված բաժնեմասերից, տարադրամի առք ու վաճառքից, տուգանքներից և այլն: Հարկ է նշել նաև արտասովոր դեպքերից ստացվող շահույթը, որը ձևավորվում է արտասովոր իրավիճակներում կատարվող ծախսերի և ստացված եկամտի տարբերությունից, օրինակ՝ գուքի ազգայնացման, ապահովագրական փոխհատուցման, բնական աղետների դեպքում և այլն: Արտադրանքի(ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված զուտ հասույթի և իրացված արտադրանքի ինքնարժեքի տարբերությունից ձևավորվում

⁶ Портер М., Такеути Х., Сакакибара М., Японская экономическая модель. Может ли Япония конкурировать? М.: Альпина БизнесБукс, 2005, էջ120

է համախառն շահույթը (վնասը): Համախառն շահույթից հանելով իրացման և վարչական ծախսերը ստանում ենք արտադրանքի իրացումից ստացված շահույթը: Սովորական գործունեությունից շահույթը(վնասը) ձևավորվում է արտադրանքի իրացումից ստացված շահույթին գումարելով ձեռնարկության գործառնական այլ եկամուտները, ներդրումային գործունեությունից շահույթը(վնասը), ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթը(վնասը) և հանելով ֆինանսական ծախսերը: Իր հերթին, ձեռնարկության զուտ շահույթը ձևավորվում է սովորական գործունեությունից շահույթին գումարելով(հանելով) արտասովոր դեպքերից շահույթը(վնասը):⁷

Ձեռնարկության գործունեության արդյունավետության և հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի շահույթի բաշխումը, ինչը տնտեսապես հիմնավորված և արդարացի իրականացնելու համար անհրաժեշտ է ճիշտ ըմբռնել շահույթի բնույթն ու բացահայտել իրական աղբյուրները: Շահույթի բաշխման առաջնահերթ նպատակներից է ձեռնարկության սեփականատերերի բարեկեցության բարձրացումը: Շահույթի բաշխումը նաև ներգործում է ձեռնարկության շուկայական արժեքի և ընթացիկ վճարունակության մակարդակի վրա, հնարավորություն է տալիս ձեռնարկություններին ներդրումներ իրականացնել ներքին ռեսուրսների հաշվին, ինչպես նաև բարձրացնել կազմակերպության ներդրումային գրավչությունը: Աշխատատողների մասնակցությունը շահույթի բաշխմանը նպաստում է ինչպես աշխատանքի արտադրողականության աճին, այնպես էլ առողջ աշխատանքային մթնոլորտի հաստատմանը ու սոցիալական պաշտպանվածության բարձրացմանը: Ձեռնարկության համար ռազմավարական նշանակություն ունի շահույթի կապիտալացվող և սպառվող բաժինների հարաբերակցությունը, քանի որ այն կանխորոշում է մի կողմից սեփականատերերի ընթացիկ եկամուտները, մյուս կողմից՝ ձեռնարկության շուկայական արժեքը, վճարունակությունը, հետագա զարգացումը և այլն: Օրենսդրությամբ կարգավորվում է շահույթի բաշխման այն մասը, որը մուտք է գործում տարբեր մակարդակի բյուջեներ հարկերի և այլ պարտադիր վճարումների տեսքով, իսկ ձեռնարկության տրամադրության տակ մնացած շահույթի ծախսման ուղիների որոշումը, դրա օգտագործման հողվածների կառուցվածքը մնում է ձեռնարկության իրավասության ներքո: Ճիշտ է շուկայական տնտեսությունում

⁷ Э. И. Крылов, В.М. Власова. Анализ финансовых результатов предприятия. ГУАП.-СПб., 2006. 256с, էջ 68

ձեռնարկությունները ձգտում են շահույթի, պետությունը հանդես է գալիս կարգավորողի դերում, իսկ բարեգործի դերում պետք է, որ հիմնականում հանդես գան անհատները, այնուհանդերձ ներկայումս լայն տարածում է ստացել ընկերությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը(ԿՍՊ), երբ շահույթի որոշակի մասն ուղղվում է սոցիալական ներդրումների: Ատենախոսությունում քննարկվել են ԿՍՊ դրական և բացասական կողմերը: Ուշադրություն է դարձվել նաև արդյունաբերությունում և առևտրում շահույթի նորմաների փոխառնչությանը:

ՀՀ-ում բիզնեսի արդյունավետության բարձրացման և դրա երկարաժամկետ զարգացման համար առանցքային նշանակություն ունի նաև ձեռնարկությունների շահաբաժնային քաղաքականությունը: Բազմաթիվ ձեռնարկություններ շահագրգռված չեն բաժնետերերի շահերի մաքսիմալացման հարցում, քանի որ մտավախություն ունեն, որ միջոցների ուղղումը շահաբաժինների կարող է վտանգել նրանց մրցակցային դիրքերը ապրանքային շուկայում, կամ էլ նոր շուկաներ մուտք գործելու հարցում: Նրանց տեսանկյունից բաժնետերերի շահերի անտեսումը էական ազդեցություն չի ունենա ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքների վրա՝ այն հիմնականում ներգործում է բաժնետերերի եկամուտների վրա: ⁸ Շահաբաժինների վճարումը կապում են նաև թույլ կորպորատիվ կառավարման և բարձր գործակալական ծախսերի հետ: Որպես կանոն, այն երկրներում, որտեղ բաժնետերերի իրավական պաշտպանությունն ուժեղ է՝ շահաբաժինները միջինում ավելի բարձր են: Կորպորատիվ հատվածում կարևորվում է ֆինանսական ռեսուրսների տնօրինման խնդիրը: Որոշ դեպքերում օրենսդրական պահանջները սահմանափակում են ձեռնարկությունների շահաբաժիններ վճարելու հնարավորությունները: Հսկայական գումարներ հատկացնելով նախընտրական քարոզարշավներին, որպես նպատակ քարոզելով տեխնոլոգիական առաջընթացն ու քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, կորպորացիաների ղեկավարները աստիքանաբար մեծացնում են իրենց տնտեսական իշխանությունը: Նրանց պարզևստությունները տարբեր գործարնքերի, խորհրդատվության համար առեղի ցուցման և հասնում(միլիոնավոր դոլարներ), գործադիր տնօրեններին հսկայական գումարներ են տրվում նաև թոշակի անցնելիս: Հարվարդի իրավունքի դպրոցի պրոֆեսոր Լ. Բեքչակի հաշվարկներով ԱՄՆ հինգ

⁸ Bebchuk L. A. The myth of the shareholder franchise. Harvard law and economics discussion paper N^o 567, Harvard law school, Cambridge, October 2005, էջ 140

խոշորագույն հանրային ընկերությունները 1993-1995թ.թ. շահույթի 4,7% -ից իրենց պարզևատրությունը 2001-2003թ.թ.-ին հասցրել են 10,3%: Եթե այդ թվերը արտամիջարկվեն(էքստրապոլյացիայի ենթարկվեն), տնտեսությանը հասցված վնասը հասնում է տրիլիոն դոլարի: ⁹

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Շահույթի հարկման և հաշվառման հիմնախնդիրները ժամանակակից անցումային տնտեսության պայմաններում», ներկայացվել են շահույթի հաշվառման խնդիրների ու հարկային համակարգի անկատարության դերը շահույթի ձևավորման և բաշխման հարցում, համախառն շահույթի ու զուտ շահույթի ձևավորման դինամիկան շտ-ում, շտ տնտեսությունում շահույթի ձևավորման և բաշխման համակարգի կատարելագործումը: Տեսաբանները մեծ ուշադրություն են դարձրել շահույթի էության ուսումնասիրությանը, երբեմն անտեսելով դրա հաշվառման բարդությունները: Ատենախոսությունում ուսումնասիրվել են շահույթի հաշվառման խնդիրներն ու դրանց հաղթահարման հնարավոր տարբերակները:

Տնտեսությունում շահույթի դերը բազմաբևեռ է՝ մի կողմից այն խթան է ձեռնարկատիրական գործունեության համար, մյուս կողմից ներդրում ներգրավելու միջոց, մեկ այլ տեսանկյունից այն նպաստում է ձեռնարկության կարողությունների աճին և այլն: Հաշվի առնելով ձեռնարկության սեփականատերերի, աշխատակիցների, բաժնետերերի համար շահույթի բոլոր դրական կողմերը, անհրաժեշտ է ընդգծել նաև դրա կարևորությունը բյուջեի եկամուտների ձևավորման գործընթացում: Տնտեսվարողները դիմելով հաշվառման կեղծիքների, խուսափելով բյուջե հարկեր վճարելուց առեղի վնաս են հասցնում տնտեսության առաջընթացին, հասարակության սոցիալ-տնտեսական կարիքների բավարարման հնարավորություններին: Այս առումով, անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել շահույթի հաշվառման հետ կապված խնդիրներն ու հարկային համակարգի անկատարության դերը շահույթի ձևավորման և բաշխման հարցում: Անցումային տնտեսությունում պարզությունը և թափանցիկությունը պետք է լինեն հարկային ծրագրերի ուղղորդող նորմերը: Նշենք, որ տրանսֆորմացիոն տնտեսություններում մեծ տարածում են ստացել հարկերից խուսափելուն նպաստող միջնորդական կառույցները: Չնայած հարկային օրենսդրության խախտումները հնարավոր է բացահայտել իրականացվող բազմաթիվ ստուգումների արդյունքում, բացահայտումների փաստացի ծավալը փոքր է: Տրանսֆորմացիոն տնտեսություններում հարկերից

⁹ Монкс Р. Корпоратия: Как генеральные директора прибирают к рукам миллионы долларов. М:ООО «Юнайтед Пресс», 2010. Էջ 93

խուսափելու դեպքերը ամբողջապես չեն բացահայտվում բարդ հարկային օրենսդրության և կոռուպցիայի պատճառով՝ այսինքն հասարակական իշխանությունը անձնական շահերի համար օգտագործելու դեպքում:¹⁰ Բացի այդ, հարկային համակարգի ստորին օղակների կողմից հարկային օրենսդրության շրջանցումը հոգուտ որոշ հարկատուների նվազեցնում է տուգանքների կիրառման արդյունավետությունը: Խնդիրը նրանում է, որ տուգանքների անփոփոխ մեծության պայմաններում վերահսկման խստացումը կարող է էլ ավելի մեծացնել կոռուպցիան և աննշան ազդեցություն ունենալ բացահայտումների վրա: Նույն հետևանքները կարող են լինել նաև տուգանքների մեծացման արդյունքում՝ կոռուպցիայի աճը կարող է հանգեցնել սոսկ թաքցվող եկամուտների վերաբաշխմանը ի օգուտ կոռումպացված պաշտոնյաների:¹¹ Հաշվի առնելով, որ հարկերից խուսափելու պատճառներից է նաև միջնորդների ծառայությունների համեմատաբար ցածր արժեքը՝ կապված փոքր ռիսկերի հետ, անհրաժեշտ է խստացնել նման ծառայությունների դեմ պայքարը: Հարկային վարչարարության կատարելագործման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հարկային հսկողության համակարգի բարելավմանը՝ հարկերից խուսափելու առումով առավել ռիսկային հարկ վճարողներին բացահայտելու համար: Թյուր է այն տեսակետը, թե անկատար դեմոկրատական ինստիտուտներով և բարձր կոռուպցիայով երկրներում հարկերից խուսափումը պայմանավորված է հարկերով և, որ հարկային դրույքաչափերի իջեցումը կնպաստի խնդրի լուծմանը: Իրականում նշված երևույթի վրա առավել մեծ ներգործություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական նորմերը, հարկային օրենսդրության թափանցիկությունը, վերահսկողների աշխատանքի վարձատրությունը և այլն: Այս տեսանկյունից տրանսֆորմացիոն երկրները կշահեն՝ իրականացնելով համապատասխան բարեփոխումներ:¹²

Անհրաժեշտ է ընդգծել ՀՀ-ում առկա սովերային հատվածի բացասական ազդեցությունը տնտեսության զարգացման՝ մասնավորապես բյուջեի հարկային եկամուտների ծավալի վրա: Բրիտանական պառլամենտի նախաձեռնությամբ ստեղծված Tax Justice Network կազմակերպության համար բրիտանացի

¹⁰ Tanzi V. Corruption around the world: Causes, consequences, scope and cures. IMF, Fiscal affairs department working paper № 98/63, 1998, էջ 33

¹¹ Левин М., Цирик М., Коррупция как объект математического моделирования. В книге: Теневые экономические системы современной России: теория – анализ-модели. Издат. Центр РГГУ, Москва, 2008, էջ. 315

¹² Pirttila J. Tax evasion and economics in transition: Lessons from tax theory. Boffit Discussion papers. Bank of Finland. Institute for Economies in transition, Helsinki, 1999 № 2, էջ. 17

տնտեսագետ Ռիչարդ Մերֆին հաշվարկել է մի շարք երկրներում չվճարված հարկերի ծավալը: Քաղաքացիներն ու կազմակերպությունները՝ խուսափելով հարկերից, նվազեցնում են բյուջեի մուտքերը, որոնք կարող էին ուղղվել տնտեսության զարգացմանը, կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտներ: Կատարված հետազոտության տվյալներով 2011թ. ՀՀ-ում ստվերային տնտեսությունը կազմել է 44% և այդ պատճառով ՀՀ –ում չվճարված հարկերի ծավալը կազմել է 685մլն. դոլար:¹³ Եթե հաշվի անենք, որ տվյալ ժամանակահատվածում շահութահարկը կազմել է հարկային մուտքերի 2,6%-ը, ապա միայն շահութահարկի գծով ստվերում է մնացել մոտ 17,81 մլն. դոլար:

Աշխատանքում հետազոտվել է ՀՀ կազմակերպությունների գործունեության արդյունքները: ՀՀ-ում 1980-90-ականներին կազմակերպությունների գործունեության արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 90-ականների կեսերը տնտեսությունում ստացվող շահույթի հիմնական մասն ապահովել է արդյունաբերությունը, սակայն աստիճանաբար տեսակարար կշիռը նվազել է: Եթե 1987թ. արդյունաբերությունում ստացվել է ընդհանուր շահույթի 64,03%, 1988-ին 63,68%, 1990-ին 52,79%, իսկ 1996-ին արդեն 21,81%:¹⁴ 80-ականների վերջերից ավելացել են աճի տեմպերը շինարարության, առևտրի, կապի ոլորտներում: 1985-1990թթ. արդյունաբերական ձեռնարկությունների շահույթի և շահութաբերության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտի շահույթի զգալի բաժինը ստացվել է թեթև արդյունաբերությունում՝ միջինում 49,5%, սննդի արդյունաբերությունում՝ միջինում 17,8%, շինանյութի արտադրությունում՝ միջինում 5,64% և այլն: 1985-1990թթ. շահույթի զգալի անկում է գրանցվել քիմիական արդյունաբերությունում, որտեղ 1985թ. համեմատ 1990թ շահույթը նվազել է 21,95%-ով, իսկ շահութաբերությունը՝ 19,48%, անտառային փայտամշակման ոլորտում, որտեղ 1985թ. համեմատ 1990թ շահույթը 24մլն ռուբլուց նվազել է մինչև -1,1 մլն ռուբլի, իսկ շահութաբերությունը՝ 18,5%-ից մինչև -1,3%:¹⁵

Ատենախոսությունում իրականացվել է ՀՀ կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերլուծությունը 1999-2009թ.թ.

¹³ www.taxjustice.net. The cost of tax abuse. A briefing on the cost of tax evasion worldwide. 2011, 15էջ

¹⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք1990, Երևան 1991, ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության ԳՀԿ-ի ռոտոպրինտ, էջ 18,19, ՀՀ վիճակագրական տարեգիրք 1995-1996, 214 ,215էջ

¹⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք1990, Երևան 1991, ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության ԳՀԿ-ի ռոտոպրինտ, էջ 19

Ժամանակահատվածում: 2009թ.-ից հետո ՀՀ կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերլուծությունը բացակայում է, քանի որ համաձայն ՀՀ վիճակագրական պետական կոմիտեի 10.12.2012թ. թիվ 50-Ն որոշման՝ 2002թ. ընդունված «Հաշվետվություն կազմակերպության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-Ֆ(տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և «Հաշվետվություն կազմակերպության միջոցների կազմի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ» Ձև թիվ 2-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը ճանաչվել են ուժը կորցրած: ¹⁶

Նախաձգնաժամային փուլում աճել է ինչպես կազմակերպությունների զուտ հասույթը, այնպես էլ իրացված արտադրանքի ինքնարժեքը: 2007թ.-ին՝ 2000թ. համեմատ կազմակերպությունների զուտ հասույթն աճել է 2,78 անգամ: 2007թ. նախորդ տարվա նկատմամբ զուտ հասույթն աճել է 34,98%-ով, 2008-ին նախորդ տարվա նկատմամբ՝ ընդամենը 5,2%-ով, իսկ 2009-ին՝ 2008-ի համեմատ աճել է 11,3%-ով:

Աղյուսակ 1.

Կազմակերպությունների զուտ շահույթը և համախառն շահույթը 1999-2009թ.թ.(մլն դրամ)¹⁷


	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Համախառն շ-թ(վնաս)	-100794,6	9807,7	30980,5	87414,0	90053,5	177227,0	262225,9	264785,7	343744,1	327576,9	350942,5
Զուտ շ-թ	-107986,5	-162992	-77428,1	-30996,1	-99482,5	94398,6	189711,6	159752,2	184137,2	121608,5	10953,6

Տնտեսությունում իրացված արտադրանքի ինքնարժեքը 2000թ. համեմատ 2007թ. աճել է 2,17 անգամ: Եթե 2005թ. 2000թ.-ի համեմատ ինքնարժեքն ավելացել է 59%-ով, ապա 2007թ.-ին միայն նախորդ տարվա համեմատ փոփոխությունը կազմել է 36,6%-ով, 2008-ին նախորդ տարվա նկատմամբ՝ 8,2%-ով, իսկ 2009-ին՝ 2008-ի համեմատ աճել է 12,5%-ով: Ընդհանուր առմամբ, ՀՀ տնտեսությունում 1999-2009թ.թ. նկատվել է ինքնարժեքի աճ: Չնայած, որ 1999թ. կազմակերպությունները վնասներ են կրել, 2000թ.-ից սկսած համախառն շահույթի ցուցանիշն աճի դինամիկա է դրսևորել՝ բացառությամբ 2008թ., երբ

¹⁶ ՀՀ պետական վիճակագրական խորհրդի 10.12.2012թ նիստի № 14 արձանագրություն, www.armstat.am
¹⁷ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 392-398, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, էջ 367- 373, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, էջ 397-403

նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 4,8%-ով՝ հաջորդ տարի՝ 2009-ին, 2008թ. նկատմամբ աճն արդեն կազմում էր 7,1%: Ինչ վերաբերում է զուտ շահույթ ցուցանիշին, 1999-2003թ.թ. կազմակերպությունները գործել են վնասներով, 2004-2007թ.թ. դիտվել է զուտ շահույթի աճ, իսկ 2008-2009թ.թ.՝ անկում: Այն դեպքում, երբ 2007թ. նախորդ տարվա նկատմամբ զուտ շահույթն աճել էր 15,28%-ով, 2008թ. այն նվազել է 40%-ով, իսկ 2009թ.՝ մոտ 90%-ով:¹⁸

Ատենախոսությունում ARIMA(p,d,q) մոդելի և ռեգրեսիոն վերլուծության օգնությամբ դիտարկվել են ՀՀ-ում համախառն շահույթի և զուտ շահույթի ցուցանիշները: Դիտարկվել է զուտ շահույթի համար ARIMA(p,d,q) մոդելը: Մոդելում zsh-ով նշանակված է զուտ շահույթը:



Գծապատկեր 1. ՀՀ-ում 1999-2009թ.թ. զուտ շահույթի ավտոկորելյացիայի ֆունկցիայի և մասնակի ավտոկորելյացիայի ֆունկցիայի կորելյոգրամները.

Կորելյոգրամների տվյալներով ունենք ARIMA(100) գործընթաց:

AR1-ի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է, քանի որ հավանականությունը t վիճակագրության համար տվել է 0,05-ից փոքր արժեք (PROB.=0,0053879):

Մոդելի բանաձևն է.

$$Y_t = 0,72068 \cdot Y_{t-1} + \epsilon_t, \text{ որտեղ}$$

Քանի որ const ոչ նշանակալի է ($B=1906,17744$), այն մոդելում չի ներառվել:


¹⁸ Նույն տեղում

Fit- ARIMA բանաձևով հաշվարկված արժեքներն են: Գրաֆիկը դուրս չի գալիս 95% ստորին(LCL) և վերին(UCL) սահմաններից: ARIMA մոդելի բանաձևով կատարվել է կանխատեսում երեք տարվա համար.

Iտարի(2010)- 8426,47170

IIտարի(2011)-6605,22149

IIIտարի(2012)-5292,68335



Գծապատկեր 2. Ջուտ շահույթի տվյալները և ARIMA մոդելի բանաձևով կատարված կանխատեսումները

Գծապատկերում ա) կարմիր գույնով ներկայացված են զուտ շահույթի արժեքները, կանաչ գույնով՝ ARIMA մոդելի հաշվարկված արժեքները, բ) մանուշակագույնով՝ վերին(UCL) սահմանները, իսկ կապույտով՝ ստորին(LCL) սահմանները: Փաստորեն, ստացված մոդելի արդյունքներով ՀՀ-ում զուտ շահույթի արժեքները կակախվածություն ունեն իրենց նախորդող արժեքներից՝ $Y_t = 0,72068 \cdot Y_{t-1} + \epsilon_t$, իսկ կանխատեսումները ցույց են տալիս, որ զուտ շահույթը նվազելու միտում է դրսևորում:

Ստուգման են ենթարկվել նաև դիտարկվող ժամանակահատվածում հաշվեկշռային և համախառն շահույթի տվյալները, սակայն երկու դեպքում էլ շարքը ստացիոնար չի եղել, դիտարկվել են նաև առաջին կարգի տարբերություններ: Այնուհետև ռեգրեսիոն վերլուծության միջոցով իրականացվել

է նույն ժամանակահատվածում համախառն շահույթի և զուտ շահույթի ուսումնասիրություն: Մոդելում կախյալ փոփոխական է զուտ շահույթը, իսկ անկախ՝ համախառն շահույթը: Նրանց միջև գոյություն ունի դրական կորելացիոն կապ՝ կորելացիայի գործակիցը $R=0,823$: Մոդելը վիճակագրորեն նշանակալի է՝ $Sig=0,002<0,05$:

Ստացված մոդելի բանաձևն է.

$$QZ = -90430,541 + 0692 \cdot ZC + \varepsilon, \text{ որտեղ}$$

$$(35462,5) \quad (0,159)$$



$$(-2,6) \quad (4,34)$$

QZ- զուտ շահույթն է,

ZC- համախառն շահույթը,

ε- սխալը, այլ գործոնները,

Նշված հավասարման ներքևում ներկայացված առաջին շարքի առաջին փակագծում ներկայացված մեծությունը ստանդարտ սխալն է, իսկ երկրորդ շարքի առաջին փակագծում՝ t-student-ը: Ֆիշերի գործակիցը՝ $F=18,825$: Բոլոր գործակիցները նշանակալի են: Մնացորդներն ունեն նորմալ բաշխում, որը երևում է հիստոգրամից:



Գծապատկեր 3. ՀՀ-ում 1999-2009թ.թ.

զուտ շահույթի հիստոգրամը

Գծապատկերում zsh-ով նշանակված է զուտ շահույթը, իսկ hsh-ով՝ համախառն շահույթը

Գծապատկեր 4. ՀՀ-ում 1999-2009թ.թ.

զուտ և համախառն շահույթները

Փորձ է արվել դիտարկել վարչական ծախսերը որպես անկախ փոփոխական, իսկ հաշվեկշռային շահույթը՝ կախյալ փոփոխական, սակայն մոդելը վիճակագրորեն նշանակալի արդյունք չի տվել ($\text{SigF}=0,479>0,05$): Այսպիսով համախառն շահույթի և զուտ շահույթի ռեգրեսիոն վերլուծության արդյունքում դրանց միջև բացահայտվեց դրական կորելյացիոն կապ՝ $R=0,823$ կորելյացիայի գործակցով: Ստացված մոդելի բանաձևի՝ $\text{ՋՇ}=-90430,541+0692\cdot\text{ՀՇ}+\epsilon$, օգնությամբ զուտ շահույթի հաշվարկը ցույց է տալիս, որ այն դեպքում երբ համախառն շահույթն աճի դրական միտում է ցուցաբերում, զուտ շահույթը նվազում է:

ՀՀ-ում պլանայինից շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանում իրականացված միջոցառումները (զնեքի ազատականացում, սեփականաշնորհում, և այլն), չնպաստեցին երկրում արդյունավետ մասնավոր սեփականատերերի խավի ձևավորմանը, որոնք մրցակցության պայմաններում գործունեություն ծավալելով կնպաստեին ՀՀ տնտեսության վերելքին: Փոխարենը երկրի տնտեսական փլուզումից օգտվեց օպորտունիստական վարքով առաջնորդվող և ռենտային շահույթի ձգտող սեփականատերերի խավը: 1991-1993թ.թ. տրանսֆորմացիոն անկումից հետո Հայաստանում մինչև 2008թ. գրանցվել են տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Ճիշտ է, տնտեսության մասնավոր հատվածը արձագանքեց տնտեսության ազատականացմանը և այլ բարեփոխումներին(առավելապես շինարարության և անշարժ գույքի ոլորտներում), սակայն աճը հիմնականում ֆինանսավորվում էր արտաքին խնայողությունների հաշվին: Երկրում նվազեց աղքատության մակարդակը՝ 2008-ին հասնելով 22,7%-ի 1999թ. 50%-ի դիմաց:¹⁹ Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2008թ. նկատմամբ 2009թ. ՀՆԱ-ն նվազեց 14,1%-ով: Նշանակալի էին փոփոխությունները ՀՆԱ կառուցվածքում՝ շինարարությունը կրճատվեց 41,6%-ով: Անկում արձանագրվեց նաև մշակող արդյունաբերությունում՝ 7,1%, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում՝ 13,3%, առևտրի ոլորտում՝ 14,8%, տրանսպորտի և կապի ոլորտում՝ 9,9%:²⁰ Ինչ վերաբերում է արտաքին տնտեսական գործունեությանը, 2009թ. արտահանումը նվազեց 32,8%-ով, ներմուծումը՝ 25%-ով: 2009թ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն նվազեց 26,06%-ով, կազմելով 2666,1\$: Նշված ցուցանիշը 2010-ին կազմել է 2844\$, 2011-ին՝ 3360\$, 2012-ին՝ 3720\$: ՀՀ -ում կարևորագույն խնդիրներից է արտագաղթը, որը

¹⁹ Հայաստանի տնտեսական զեկույց 2009.Ճգնաժամից դեպի նոր զարգացում: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Երևան, հոկտեմբեր 2009, 13 էջ

²⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2012, էջ 245

Համաշխարհային Բանկի գնահատմամբ 2005-2010թթ. ընթացքում միջինում կազմել է տարեկան 75 հազ. մարդ: ²¹ 2010թ.-ից սկսած տնտեսությունում իրավիճակն աստիճանաբար սկսել է բարելավվել: Այն պարագայում, երբ ՀՀ-ում կազմակերպությունների զուտ շահույթի դինամիկան անկանոն է, համեմատաբար կայուն իրավիճակ է բանկային համակարգում, որի զուտ շահույթը 2012թ կազմել է 42,4 մլրդ դրամ, ընդ որում 22 առևտրային բանկերից 18-ն աշխատել են շահույթով, իսկ չորսը վնասներ են կրել: 2011թ. համեմատ բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների(ROA) և կապիտալի(ROE) աճել են համապատասխանաբար 0,1% և 1,4%, և արդյունքում կազմել են 1,9% ու 11,2%: 2012թ. ընթացքում շահույթով աշխատող բանկերի շահույթի Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակից չի փոփոխվել՝ պահպանելով 0,09 ցուցանիշը: Դա նշանակում է, որ ՀՀ-ում շահութաբեր բանկերի միջև շահույթի կենտրոնացվածության մակարդակը թույլ է: ²²

Տնտեսությունում կազմակերպությունների գործունեության շահութաբերությունը բարձրացնելու, գործարար միջավայրն առողջացնելու համար անհրաժեշտ է համալիր միջոցառումների իրականացում, որոնցից են ներդրումների ներգրավումը, հարկային համակարգի կատարելագործումը, կոռուպցիայի դեմ պայքարը, մրցակցային միջավայրի ձևավորումը, ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը, արտադրողականության, խնայողությունների աճը և այլն: ՀՀ տնտեսության համար մեծ նշանակություն ունի արտաքին ներդրումների ներգրավման գործընթացը, որը դեռևս ցանկալի արդյունքների չի հասել: Խոչընդոտող բազմաթիվ պատճառներից կարելի է նշել տարածաշրջանի և երկրի ռիսկայնության վարկանիշները, ներդրումների համակարգման և անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայության խնդիրները: Կարևոր է նաև նոր նախաձեռնությունների խթանման, տարբեր ձեռնարկումների ընթացքում առաջացող մասնավոր և հանրային օգուտների անհամապատասխանության հարցը: Ներդրողները պետք է համոզված լինեն, որ իրականացված ներդրումների արդյունքը ամբողջությամբ երաշխավորված կլինի և դրանցից ուղղակի օգուտներ չեն ստանա երրորդ անձիք՝ հանգեցնելով անազնիվ մրցակցության և հասանելիք

²¹ World development indicators 2013. The World Bank. Washington, էջ 96

²² Հայաստանի ֆինանսական համակարգը: Զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը 2012. ՀՀ կենտրոնական բանկ 2013, էջ 39

շահույթի նվազեցման: ²³ Ներդրումների ներգրավման գործում նշանակալի է բարձր որակավորում ունեցող աշխատողների զբաղվածությունը, ինչը ՀՀ-ում վերջին տարիներին ցուցաբերել է անբարենպաստ դինամիկա՝ կապված մի շարք գործոնների հետ, այդ թվում միգրացիայի: Եթե ՀՀ-ում 2007թ օտարերկրյա ուղղակի ներդրումների(ՕՈՒՆ) ներհոսքը կազմել է 699 մլն. դոլար, իսկ արտահոսքը՝ 2 մլն. դոլար, 2008-ին՝ համապատասխանաբար 935մլն. դոլար և 10 մլն. դոլար, ապա 2012թ. ՕՈՒՆ ներհոսքը կազմել է 489 մլն. դոլար, իսկ արտահոսքը՝ 16 մլն. դոլար:²⁴

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ-ում ակտիվների շահութաբերության սկզբունքային փոփոխություններ չեն գրանցվել: Սակայն ՀՀ տնտեսության համար բացասական բնութագիր է մնում ներգրավվող կապիտալի կենտրոնացումը առավել շահութաբեր ճյուղերում, ինչը խոչընդոտում է տնտեսության համաչափ զարգացմանը: Որոշ ոլորտներում արտադրական ակտիվների ու արտադրանքի շահութաբերությունը նվազում է հիմնական ֆոնդերի մաշվածության և հնացած արտադրական տեխնոլոգիաների պատճառով:

Երկրում գործարարության զարգացման և շուկայի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման է մրցակցային մթնոլորտը: Չնայած վերջին տարիներին իրականացվել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստող բարեփոխումներ, ՀՀ-ում մրցակցային դաշտ ապահովելու բազմաթիվ խոչընդոտներ կան: Համաշխարհային տնտեսական ֆորումում հրապարակված 2012-2013թ.թ. Համաշխարհային մրցունակության զեկույցի տվյալներով Հայաստանը 144 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով 10 միավորով: Զեկույցում մրցունակության մակարդակի գնահատման 12 հիմնական հենասյուների համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանի առավելապես զիջում է «շուկայի չափ»(144 երկրների շարքում գրավելով 115-րդ տեղը), «նորարարություններ»(144-ից 105-րդը),

²³ Հայաստանի տնտեսական զեկույց 2010. Տնտեսության դիվերսիֆիկացման և արտահանման խթանման ընդլայնման պահանջը: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Երևան, հոկտեմբեր 2010, էջ 40

²⁴ World investment report 2013. Global value chains: Investment and trade for development. United nations conference on trade and development. United nations publications, Geneva, 2013, էջ 216

«գործարարության կատարելագործվածություն» (144-ից 92-րդը) և «մակրոտնտեսական կայունություն»(144-ից 83-րդը) ցուցանիշներով:²⁵

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունը պայքարում է Մեծ ճգնաժամից հետո ամենատնական և խորը ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների դեմ: Կրկնությունից խուսափելու համար անհրաժեշտ է հանգամանորեն հետազոտել դրա առաջացման պատճառները: Շատ մասնագետներ առաջնային պատճառը համարում են բանկային ինստիտուտների ազահությունը՝ չափազանց մեծ շահույթների ձգտումը: Ներկայումս համաշխարհային տնտեսությունում տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ, ուրվագծվում են նոր տեխնոլոգիական և սոցիալ-տնտեսական հեռանկարներ: Համաշխարհային շուկայում ավելի ու ավելի է սրվում երկրների մրցակցությունը ներդրումների և արտադրության էրտեղաբաշխման համար: Եթե նախկինում առաջնային նպատակ էր մեծ շահույթի ստացումը՝ անհաջող ինստիտուտների պայմաններում կամ ավելի փոքր շահույթը՝ հուսալի ինստիտուտների պայմաններում, այժմ կարևորվում են նաև այլ գործոններ: Զեռնարկության շահույթի վրա էական ներգործություն են ունենում տնտեսությունում տեղի ունեցող ցիկլային տատանումները, կառուցվածքային փոփոխությունները, սպառողական պահանջարկի և ռեսուրսների գների փոփոխությունները, պետության տնտեսական քաղաքականությունը և այլն: Արդյունքում շահույթ է ստանում չափահովագրված ռիսկը իր գործունեության ընթացքում լավագույնս հաշվի առնող ձեռնարկությունը, որը կհամապատասխանեցնի արտադրությունը անընդհատ տեղի ունեցող դինամիկ տատանումներին Մրցակցային միջավայրում ձեռնարկությունները պայքարում են էլ ավելի մեծ շահույթ ստանալու համար: Այն կազմակերպությունները, որոնք, օգտվելով իրենց մենաշնորհային դիրքից շահույթներ են ստանում առանց նորարարությունների, խոչընդոտում են տվյալ ճյուղի զարգացմանը:

Շահույթի ձևավորման և բաշխման ուսումնասիրությունները հիմք դարձան հետևյալ եզրակացությունների և առաջարկությունների համար.

-Շուկայում դիրքի չարաշահման հետևանքով գերշահույթների ստացումը սահմանափակելու նպատակով ցանկալի է կատարելագործել խախտումների համար վարչական պատասխանատվությունը:

²⁵ The global competitiveness report 2012-2013. Woeld economic forum. Geneva, 2012, էջ 16,18,20

-ՀՀ տնտեսության հետագա զարգացմանը նպաստող գործոններից են սոցիալական տարբերակման կրճատումը, ժողովրդագրական խնդիրների հաղթահարումը, նորարարական գաղափարների զարգացումը և ակտիվ կիրառությունը: Վերջինս ապահովելու համար կարևորվում է մրցակցային դաշտի առկայությունը, համապատասխան ինստիտուտների ստեղծումը: Տնտեսությունում հարկ է բարձրացնել նաև ներքին կուտակման նորմերը, ուշադրությունը կենտրոնացնել ներքին շուկայի զարգացման վրա:

-Արմատապես փոխել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքը, և նաև հարկային մարմինների աշխատանքը՝ ստվերային տնտեսության կրճատման և շահութահարկի գանձման ուղղությամբ:

-ՀՀ տնտեսությունում ձեռնարկությունների շահույթի աճին մեծ չափով կնպաստի համաշխարհային շուկայում ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը:

-ՀՀ ձեռնարկություններում ծախսերը կրճատելու համար առաջնահերթ նշանակություն ունի տնտեսությունում հիմնական ֆոնդերի հաշվառումը, դրանց կենսունակության ստուգումը, քանի որ արդի պահանջներին չհամապատասխանող միջոցների դուրս գրման հետևանքով կնվազեն ամորտիզացիոն հատկացումները և չարաշահման հնարավորությունները:

-Հանրապետությունում գործող ձեռնարկությունների շահութաբերությունը բարձրացնելու, նոր արդյունավետ ձեռնարկություններ ստեղծելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք կընդգրկեն հարկային համակարգի կատարելագործումը, մրցակցության պաշտպանությունը, ինստիտուցիոնալ բարեփոխումները, արտադրողականության և արտադրության արդյունավետության բարձրացումը և այլն: Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավումը հնարավորություն կտա ընդլայնել կամ կազմակերպել այն ապրանքատեսակների արտադրությունը, որոնց սպառման տեսակարար կշիռը մեծ է(հատկապես պարենային ապրանքները), իսկ ներկայում դրանց ներմուծման ծավալները համեմատաբար մեծ են:

-Ի նկատի ունենալով համաշխարհային ֆինանսական շուկայում պահպանվող անորոշությունը, զարգացած երկրների ճնշող մասի պարտքի մեծածավալ աճը, այսօր կարևորվում է ՀՀ տնտեսության ոլորտների ֆինանսական ներքին երկարաժամկետ ռեսուրսներով ապահովումը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Շահույթ կատեգորիայի վերլուծության տեսա-մեթոդական հիմքերը, Ֆինանսներ և էկոնոմիկա, #7(157), 2013թ., էջ 41-44
2. Շահույթի տնտեսական էությունը և գործառույթները շուկայական տնտեսությունում, Ֆինանսներ և էկոնոմիկա #7(157), 2013թ., էջ 44-47
3. Շահութաբերության խնդիրները ՀՀ տրանսֆորմացիոն տնտեսությունում, Ֆինանսներ և էկոնոմիկա, #9(159), 2013թ., էջ 12-15
4. Նոր ստեղծված արդյունքը, տեսակները և ձևավորման աղբյուրները, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, 2009թ., #1-2, էջ 87-90
5. Գլոբալ տրանսֆորմացիոն գործընթացների ազդեցությունը շահույթի ձևավորման և բաշխման վրա, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, 2009թ., #8-9, էջ 99-101

ГАЛСТЯН АНИ НОРИКОВНА
ФОРМИРОВАНИЕ И РАСПРЕДЕЛЕНИЕ ПРИБЫЛИ В РЫНОЧНЫХ
СТРУКТУРАХ

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01.-«Общая экономика». Защита состоится 16 мая 2014г. в 15.00, на заседании Специализированного Совета по экономике ВАК РА 015, действующего в Ереванском государственном университете по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Целью диссертационной работы является исследование прибыли как основного мотива экономической деятельности. В диссертации исследованы проблемы формирования и распределения прибыли предприятий, осуществлен анализ текущих и предшествующих показателей прибыли в РА для оценки нынешней ситуации и тенденций развития; выявлены основные факторы, влияющие на формирование прибыли в РА; на основе статистических наблюдений проанализированы положительные результаты развития отраслей в РА и выделены сферы, которые быстрее реагировали на сигналы рынка.

Основные научные результаты имеют теоретическое и практическое значение, научная новизна которых состоит в следующем.

- ❖ выявлена своеобразное устокование роли прибыли в контексте развития национальной экономики РА и ее интеграции в систему мировых экономических связей;
- ❖ осуществлена систематизация и обобщение теоретических положений экономической сущности и источников формирования прибыли
- ❖ представлены предложения по повышению рентабельности в РА, основанные на проведенных исследованиях и опыте разных стран;

- ❖ осуществлена оценка валовой и чистой прибыли предприятий в РА на основе эконометрического анализа.

На основе проведенных исследований сделаны следующие заключения:

- с целью ограничения объемов сверхприбылей путем различных злоупотреблений желательнее усовершенствовать в РА меры административной ответственности;
- необходимо проведение радикальных преобразований в сфере деятельности Государственного комитета по защите конкуренции, а также налоговых структур касательно ограничения теневой экономики и роста налога на прибыль;
- росту прибыли предприятий в РА будет способствовать повышение конкурентоспособности национальной экономики на мировом рынке, необходимо уделить особое внимание основным факторам, препятствующим конкурентоспособности экономики РА: развитию инфраструктур, повышению уровня образования, усовершенствованию бизнеса, инновациям.
- учет основных фондов, проверка их жизнеспособности, так как списание не соответствующих современным требованиям средств будет способствовать уменьшению амортизационных отчислений и возможности злоупотреблений;
- с целью повышения рентабельности предприятий, а также создания новых предприятий, осуществление комплексных мероприятий, включающих институциональные преобразования, повышение производительности и эффективности производства и т. д..
- учитывая сохраняющуюся нестабильность на мировом финансовом рынке, увеличение долга большинства развивающихся стран, особенно важно обеспечение экономики РА долгосрочными внутренними финансовыми ресурсами.

Formation and distribution of the profit in the market structures

The dissertation is submitted for the pursuing of the scientific Degree of the Doctorin of the Economic sciences in the Field of 08.00.01 «General Economics»

The defense of the dissertation will take place on May 16, 2014, at 15.00 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at the Yerevan State University. Address : 52, Abovyan str., Yerevan 0009, Armenia

SUMMARY

The dissertation is devoted to the study of the problem of the formation and the distribution of the market profit. The problem of the formation and distribution of profit of the enterprises is studied in dissertation. An analysis of the current and previous profit indicators in Armenia to assess the current situation and development tendencies is carried out. Factors affecting the profit formation in RA are identified. The positive results of the development of Armenian industry and identifying areas that respond quickly to market signals are analyzed.

The main scientific results have a theoretical and practical significance and the scientific novelty of which is as follows.

- ❖ The peculiar kind of the explanation of profit is presented from the view point of the Armenian economy development and its integration in the world economy;
- ❖ implemented(carried) systematization and generalization of theoretical propositions (assumptions)of economic nature (entities) and sources of formation(generation) of profits
- ❖ presented proposals to increase profitability in Armenia, on the basis of the research and the experience in different countries;
- ❖ carried out an econometric analysis of gross and net profit of the enterprises in Armenia.

Conclusions based on these studies are as follows:

-in order to restrict the excessive profits through various forms of abuse in RA precautions must be taken to insure that administrative responsibilities are improved;

-radical reforms in the sphere of activity of the State Committee for the protection of competition, as well as tax structures related to the restriction of the shadow economy and growth of revenues from profits tax must be carried out

-growth of the profit of enterprises in the Republic of Armenia will provide the competitiveness of the national economy in the world market. It is necessary to pay special attention to the main factors that provide the competitiveness of the economy of Armenia as well the development of infrastructures, improve the level of the education, business sophistication and innovation.

-asset accounting, checking their viability as write-offs incompliant with the modern requirements of the funds will help to reduce the depreciation(amortization) charge and the possibility of abuse;

-in order to increase the profitability of enterprises and the creation of new enterprises, it is necessary to provide the implementation of comprehensive measures, including institutional reforms, increased productivity and more efficiently production and so on.

-in consideration of persisting instability in global financial markets, the increase in the debt of most developing countries, particularly important to ensure the economy of Armenia with long-term internal financial resources.